յելելոցն քաղաքիս. և յետ սրբոյ պատարագին տա-
բան զմեզ մինչ ի դրունս եկեղեցոյն չարականաւ, և
անդ ասացեալ վարդապետացն զՀայր մերն և դառ-
նալ։ Եւ կրկին ասացեալ չարական քահանայից եւ
դպրաց մինչ ի դրունս դրսին, և ի մերձ լինել սահ-
մանացն մեր, ևս քան զևս բարձեալ զձայնս իւրեանց՝
մինչ ի տունն յորում նստէին հրաւիրեալքն։ Երեկոյին
ժողովեցաք զբոռոճիկն՝ որ օժիտս. և յայսմ երեկոյի
Պալաթցիք եկին։

Եւ Դշի (23 Մայիս) երեկոյին կրկին հրաւիրեալքն
եկին ամենայն՝ նստեալ մինչ մօտ ի լուսին, և ելեալ
գնացին մի մի իւրաքանչիւր տեղիս։

Կիրակիս օր ամսոյ ԻԸ էր։

Յունիս ամիս օր Եշի։ Ի Ղալաթիայ գնացի առ
վարդապետն՝ տեսանել զնա։

Դ-իս Կիրակի. բարեկենդան Լուսաւորչի։

Եւ ի միւս Կիրակիս (11 Յունիս) զմեր Մղտեսի Տի-
լէկի զդուստրն կարգեցաք և ի պսակ գնացաք ի Սուրբ
Նիկողոս, և յետ պսակին մինչև ի ծովեզրն երթեալ՝
ի նաւի եդաք զնոսա և դարձաք։

ԺԶ-իս[1]) օր Ուրբաթիս՝ խարաճն ելաւ։

Երեկոյի Շաբաթիս (17 Յունիս) Տէր Մելքիսեդն ընդ
Տէր Խաչատուրն և ընդ Աստուածատուրն կռվեցաւ
բազումս։

Եւ Կիրակիս (18 Յունիս) հարսնիք գնացի Շեհրենց
Յակոբին։

Եշի (22 Յունիս). Մովսէսն մեր ի Մղսոնցն եկան՝
ձայնել զնոսա։

ԻԵ-իս բարեկենդան Վարդավառի։

Յուլիս ամիս օր Շաբաթ. նաւակատիք Վարդա-
վառի։

1) ԺԷ.